ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-21/13
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան 27 07 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Օրիոն 7» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Ն.Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, համատեղ հիշատակմամբ՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ աշխատանքների որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 528 000 (հինգ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ 88 000 (ութսունութ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570027609970100 ՀՎՀՀ 01501898	**«Օրիոն 7» ՍՊԸ** **ՀՀ,Ք.Երևան,Մամիկոնյանց 27շ, բն 126** **«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ** **Հ/Հ 220453330684000,** **ՀՎՀՀ 00147538** **Տնօրեն՝ Ն. Սարգսյան**
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«27» 04 Հավելված N 1
2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը* /ամբողջական բնութագրերը բերված են ստորև/	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	Ժամկետը
2	71351540	«ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգման և ներկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերում	դրամ	408 000	408 000	1	ՀՀ,Գեղարքունիքի մարզ, Սևանի լեռնանցք /Սեմյոնովկա/ հեռուստակայան	աշխատանքների սկիզբ-ավարտ
3	71351540	«ՀՀՌՑ» ՓԲԸ Թալինի Արեգ (Արագածոտնի մարզ) հեռուստակայանի H=80 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգման և ներկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերում	դրամ	120 000	120 000	1	ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Արեգ, Թալինի հեռուստակայան	աշխատանքների սկիզբ-ավարտ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սևանի լեռնանցք հեռուստակայանի H=180մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման

1. Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ

1.1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից տրամադրվող՝ ՀՀՌՑ ՓԲ ընկերության Սևանի լեռնանցք հեռուստակայանի H=180մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանք) պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Պայմանագիր):

1.2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:

1.3. Աշխատանքի աշխատանքների որակի և Պայմանագրին համապատասխանության տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի Աշխատանքի բոլոր փուլերում, այդ թվում.

1.3.1 Աշխատանքի իրականացման Պայմանագրի շրջանակներում մատակարարվող նյութերի համապատասխանության ստուգումը տեխնիկական պահանջներին:

1.3.2 Վերահսկի ներկախառնուրդի պատրաստման գործընթացը:

1.3.3 Մետաղական կոնստրուկցիաների մաքրումը ժանգից:

1.3.4 Վնասված մակերևույթների մածիկացումը:

1.3.5 Ներկվող մակերևույթների փոշեզերծումը:

1.3.6 Ներկվող մակերևույթների յուղայնազերծումը ուայթ սպիրիտով:

1.3.7 Նախաներկումը:

1.3.8 Ներկումը:

1.4 Բոլոր միջանկյալ աշխատանքների արդյունքները պետք է ձևակերպվեն համապատասխան ակտերով՝ ըստ СНиП 3.04.03-85*:

1.5 Տեխնիկական հսկողություն իրականացնողը պետք է.

1.5.1 Հսկի Կապալառուի կողմից Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ օդերևութաբանական պահանջների պահպանմանը. ջերմաստիճան, օդի հարաբերական խոնավություն, քամու արագություն:

1.5.2 Ապահովի կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին:

1.5.3 Աշխատանքի ընթացքում պարբերաբար լուսանկարահանի և տեսանկարահանի Աշխատանքի ընթացքը:

1.5.4 Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնի Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը:

1.5.5 Վերահսկի և գնահատի աշխատանքների գործընթացը՝ ապահովելով ավարտը՝ համաձայն Կապալառուի Պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի:

1.5.6 Վերահսկի Աշխատանքի ընթացքում օգտագործվող նյութերի պահպանման պայմաններև ու որակը:

1.5.7 Համապատասխան չափիչ գործիքի կիրառմամբ ստուգի տեղադրված նախաներկի և ներկի շերտերի հաստության համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին՝ կազմելով համապատասխան արձանագրություն ըստ ՀUS ISO 2808:2007, MOD պահանջների:

1.5.8 Ստուգի բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար:

1.5.9 Գտնի Աշխատանքի իրականացման ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկի այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են աշխատանքային ժամանակացույցի պահպանման համար:

1.5.10 Կապալառուից պահանջի Աշխատանքի կատարման ընթացքում անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանումը:

1.5.11 Կատարի գրառումներ, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):

1.5.12 Կատարի աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցի կատարողական փաստաթղթերի կազմմանն ու հաստատմանը:

1.5.13 Աշխատանքի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնի Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարներ, տեսաերիզներ, ծածկված աշխատանքների ակտեր, չափումների արձանագրություններ, սերտիֆիկատներ:

Աշխատանքի իրականացման ողջ ընթացքում ապահովի տեխնիկական հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:

. Այլ պահանջներ

2.1 Տեխնիկական հսկողություն իրականացնողը պետք է ունենա <<Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն>> համապատասխան վկայական և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանք:

2.2 Տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացման համար բոլոր անհրաժեշտ պարագաները և տեխնիկական միջոցները պետք է ապահովվեն տեխնիկական հսկողություն կատարողի կողմից, այդ թվում՝միկրոմետր, թվային ֆոտոխցիկ, հեռադիտակ և այլն:

2.3 Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը ինքն է կրում պատասխանատվություն իր աշխատակիցների կողմից անվտանգության կանոնների պահպանման, ինչպես նաև, բարձրության վրա աշխատանքների իրականացման համապատասխան անվտանգության պարագաների անսարքությունների համար:

Արեգի հեռուստակայանի H=80մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման

1. . Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ

1.1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից տրամադրվող՝ ՀՀՌՑ ՓԲ ընկերության Արեգ հեռուստակայանի H=80մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման, ներկման աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանք) պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Պայմանագիր):

1.2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության աշխատանքների որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:

1.3. Աշխատանքի աշխատանքների որակի և Պայմանագրին համապատասխանության տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի Աշխատանքի բոլոր փուլերում, այդ թվում.

1.3.1 Աշխատանքի իրականացման Պայմանագրի շրջանակներում մատակարարվող նյութերի համապատասխանության ստուգումը տեխնիկական պահանջներին:

1.3.2 Վերահսկի ներկախառնուրդի պատրաստման գործընթացը:

1.3.3 Մետաղական կոնստրուկցիաների մաքրումը ժանգից:

1.3.4 Վնասված մակերևույթների մածիկացումը:

1.3.5 Ներկվող մակերևույթների փոշեզերծումը:

1.3.6 Ներկվող մակերևույթների յուղայնազերծումը ուայթ սպիրիտով:

1.3.7 Նախաներկումը:

1.3.8 Ներկումը:

1.4 Բոլոր միջանկյալ աշխատանքների արդյունքները պետք է ձևակերպվեն համապատասխան ակտերով՝ ըստ СНиП 3.04.03-85*:

1.5 Տեխնիկական հսկողություն իրականացնողը պետք է.

1.5.1 Հսկի Կապալառուի կողմից Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ օդերևութաբանական պահանջների պահպանմանը. ջերմաստիճան, օդի հարաբերական խոնավություն, քամու արագություն:

1.5.2 Ապահովի կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին:

1.5.3 Աշխատանքի ընթացքում պարբերաբար լուսանկարահանի և տեսանկարահանի Աշխատանքի ընթացքը:

1.5.4 Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնի Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը:

1.5.5 Վերահսկի և գնահատի աշխատանքների գործընթացը՝ ապահովելով ավարտը՝ համաձայն Կապալառուի Պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի:

1.5.6 Վերահսկի Աշխատանքի ընթացքում օգտագործվող նյութերի պահպանման պայմաններև ու որակը:

1.5.7 Համապատասխան չափիչ գործիքի կիրառմամբ ստուգի տեղադրված նախաներկի և ներկի շերտերի հաստության համապատասխանությունը Պայմանագրի պահանջներին՝ կազմելով համապատասխան արձանագրություն ըստ ՀUS ISO 2808:2007, MOD պահանջների:

1.5.8 Ստուգի բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար:

1.5.9 Գտնի Աշխատանքի իրականացման ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկի այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են աշխատանքային ժամանակացույցի պահպանման համար:

[illegible] պահանջի Աշխատանքի կատարման ընթացքում անվտանգության տեխնիկայի և [illegible] անվտանգության կանոնների պահպանումը:

[illegible] գրառումներ, որոնք անհրաժեշտ են Պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով [illegible] աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):

[illegible] աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցի կատարողական փաստաթղթերի [illegible] հաստատմանը:

[illegible] Աշխատանքի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնի [illegible]ություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարներ, տեսաերիզներ, ծածկված աշխատանքների ակտեր, չափումների արձանագրություններ, սերտիֆիկատներ:

1.5.14 Աշխատանքի իրականացման ողջ ընթացքում ապահովի տեխնիկական հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:

2. Այլ պահանջներ

2.1 Տեխնիկական հսկողություն իրականացնողը պետք է ունենա <<Բարձրության վրա վտանգավոր աշխատանքների կատարում ալպինիստական տեխնոլոգիաներով և առաջին բուժ. օգնություն>> համապատասխան վկայական և առողջական վիճակի վերաբերյալ տեղեկանք:

2.2 Տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացման համար բոլոր անհրաժեշտ պարագաները և տեխնիկական միջոցները պետք է ապահովվեն տեխնիկական հսկողություն կատարողի կողմից, այդ թվում՝միկրոմետր, թվային ֆոտոխցիկ, հեռադիտակ և այլն:

2.3 Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը ինքն է կրում պատասխանատվություն իր աշխատակիցների կողմից անվտանգության կանոնների պահպանման, ինչպես նաև, բարձրության վրա աշխատանքների իրականացման համապատասխան անվտանգության պարագաների անսարքությունների համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ, ք. Երևան, նորք, Հովսեփյան 95 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570027609970100 ՀՎՀՀ 01501898	**«Օրիոն 7» ՍՊԸ** **ՀՀ,Ք.Երևան,Մամիկոնյանց 27շ, բն 126** **«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ** **Հ/Հ 220453330684000,** **ՀՎՀՀ 00147538** **Տնօրեն՝ Ն. Սարգսյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«02» Հավելված
2021 թ. կնքված
ՀՀՌՑ-ՀՄԱԽԾՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, %, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	71351540	«ՀՀՌՑ» ՓԲԸ Սևանի լեռնանցք (Գեղարքունիքի մարզ) հեռուստակայանի H=180 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգման և ներկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերում	-	-	-	-	-	-	-	-	-	408 000	408 000	408 000	408 000
3	71351540	«ՀՀՌՑ» ՓԲԸ Թալինի Արեգ (Արագածոտնի մարզ) հեռուստակայանի H=80 մ բարձրության աշտարակի և ալիքատար կամրջակների մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգման և ներկման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերում	-	-	-	-	-	-	-	-	-	120 000	120 000	120 000	120 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ, ք. Երևան, նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Օրիոն 7» ՍՊԸ
ՀՀ,Ք.Երևան,Մամիկոնյանց 27շ, բն 126
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220453330684000,
ՀՎՀՀ 00147538
Տնօրեն՝ Ն. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«27» 07 2021 թ. կնքված
ՀՀՌՅ-ՀՄԱԽԾՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» 07 20 21թ. կնքված
ՀՀՈՏ-ՀՄԱԽԾՁԲ-21/13 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն